

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՍԿ

Տարեկան գինը 10 բուրլ, կէս տարվանը 6 բուրլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Меск»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքային պատասխանատուութիւն:—Ներ-
քին ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Ախալքալաքից: Նա-
մակ խմբագրին: Նամակ խմբագրին:—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ: Արտաքին լուրեր:—ՀԵՌԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Յայտնի է որ մեր Թիֆլիսի քաղաքային
ուսարարական ձեռնարկում է այնպիսի ջրանցք
մեր քաղաքում, որի գոյութիւնը ապահով-
վում է, երաշխաւորվում է քաղաքի ամբողջ
ունեցածով: Յայտնի է, նոյնպէս, որ մեր
ուսարարական մշակել է և արդէն ուղարկել է
միմիայն ՏԵՍՈՒԹԻՒՆ հաստատութեանը քաղա-
քային բանկի ծրագիրը, նման այն բանկե-
րին, որոնք նորերում այդքան տնտի վախ-
ճան ունեցան Սփոյն և Վաղիկավկաս քա-
ղաքներում:

Փոխանակ մեր սեփական գաղափարներն
անելու այդ տեսակի հիմնարկութիւնների
վտանգաւոր լինելու մասին, որոնցից շահ-
վում են մի քանի մարդիկ, իսկ նրանց ա-
նաջողութեան ժամանակ վնասվում է ամ-
բողջ քաղաքը, քանի որ քաղաքի իւրաքան-
չիւր բնակիչը տուժում է հիմնարկութեան
անանկութիւնը և անաջողութեան ժամա-
նակ քաղաքի իւրաքանչիւր բնակիչի վերջին
կալուածքը, վերջին տունը ծախվում է հիմ-
նարկութեան վնասները ծածկելու համար,
—մեր այստեղ կը բերենք «Неделя»
ուսու շաբաթագրի № 42-ի յօդուածի հե-
տեւէ կտորը:

«Քաղաքի վրա բանկային օպերացիաների
համար պատասխանատուութեան բարձրը,
—յարուցանում հետեւեալ խնդիրը. արդեօք
նոյնն է քաղաքի ազգաբնակչութիւնը քաղա-
քի ներկայացուցչութիւնը: Քաղաքի վա-
րդինքը անկողնի կերպով էին վերաբերվում
գործին, իսկ պատասխանատու է ամբողջ
քաղաքային ազգաբնակչութիւնը: Մեր քաղա-
քային և Երեւոյի քաղաքային ընտրողակա-
նի տեսանկյունից յանձնում է քաղաքային գործը,
գլխաւորապէս, քաղաքի ամենահարուստ
մասի ձեռքը, որին աւելի մատչելի է օգու-
վել բանկի շահերից, իսկ շատ քիչ նշանա-
կութիւն է տալիս քաղաքային մնացած
ազգաբնակչութեանը, որի համար բանկի
բարեկեցութիւնը արդեւ չի պատուէր:
Քաղաքային բնակիչներից մինքն տաս անգամ պա-
կաս իրաւունքներ ունի քան միւսը, իսկ
պատասխանատուութիւնը ընկնում է հաւա-
սարապէս թէ առաջինի և թէ երկրորդի
վրա, չը նայելով որ առաջինը ամենեւին չէ
կամենում քաղաքային բանկ ունենալ, բայց
պատասխանատու է իր ունեցածով, երբ
այդ բանկը քանդվում է»:

Այնուհետեւ շաբաթագրերը խօսում է
այն բանի վրա որ կառավարութիւնը սահ-
մանափակում է գէմաւորների կամայական
և մեծ թիւի ներկայացուցչութիւնը, չը նա-
յելով որ գէմաւորները մեր քաղաքներից
շատ աւելի հարուստ են: Զէմաւորներին
չէն թոյլ տալիս մինչև անգամ խոշոր փո-
խառութիւններ անել: Բայց քաղաքները,
նոյն իսկ փոքրերը, ունենով աւելի աննշան

կալուածներ, ամեն տեսակ ընկերայնոց-
նոց գործեր են սկսում, վտանգաւոր կրե-
դիտային հիմնարկութիւններ ունեն, որոնց
օրինաւոր կերպով կառավարելը, վերջի
վերջոյ, անկարող են լինում:

«Ասում են, շաբաթագրում է ուսու շաբա-
թագիրը, որ քաղաքային ազգաբնակչութիւ-
նը գլխաւորապէս բաղկացած է վաճառա-
կաններից և արդիւնաւորներից, որոնք
գլխաւորապէս կրեդիտի մէջ պահանջ ու-
նեն և քաղաքային կրեդիտը նպատակ ունի
կենդանացնել առոււտուրը: Բայց մի՞թէ
կարելի է քաղաքային ազգաբնակչութիւ-
նը և առոււտուրային դատարարը նոյնա-
նման համարել: Ամեն բնակիչ քաղաքի մէջ
վաճառական չէ. քաղաքային հաղար ու մի
պարագմունքներ կան բացի վաճառակա-
նութիւնից: Ուրեմն մի խոշոր բանկային
ձեռնարկութիւն պէտք էր հիմնել ոչ թէ
քաղաքային սկզբունքի վրա, այլ առու-
տուրային սկզբունքի վրա: Չը պէտք է
խառնել, չիփօթել ազգաբնակչութեան
զաղափարը, դասակարգի զաղափարի
հետ: Շահ ներկայացնող ձեռնարկութիւն-
ներ աւելի արդար կը լինէր հիմնել դասա-
կարգային հիմունքների վրա: Թող առեւտրա-
կանների շրջանն ունենայ իր առուտուրա-
կան կրեդիտ, տանտերերը իրանց կա-
լուածական կրեդիտ, միջին դասակարգի
մարդիկ իրանց փոխադարձ կրեդիտ, և
այն, այն ժամանակ իւրաքանչիւրը իր գոր-
ծը կունենայ և իր որոշ պատասխանատու-
թիւնը»:

Քաղաքային կրեդիտը հասկանալի է
երբ նա գործ է դրվում նոյն իսկ քաղա-
քային գործերի վրա, բայց հիմնել քաղա-
քային կրեդիտ, որպէս զի նրանով շահվեն
միայն վաճառականները, իսկ երբ բանկը
կը մասնականայ, պատասխանատու է ամբողջ
քաղաքը, պատասխանատու են այն մարդիկ,
որոնք այդ բանկից ամենեւին չէին օգտվում,
—գա, կարելի է ասել, անարդար է:

Եւ ահա, ուրիշ քաղաքների օրինակին
հետեւելով, և Թիֆլիսի քաղաքային վարչու-
թիւնը, այժմեան քաղաքագլխի օրով, սկսել
է երեք ձեռնարկութիւններ, որոնք եթէ ան-
փոյթ է անարդար կերպով տարվեն, նրանց
համար պատասխանատու կը լինի ամբողջ
քաղաքը, նրանց վնասները ծածկելու հա-
մար կը ծախվի իւրաքանչիւր քաղաքացու
կալուածքը: Դրանք են, քաղաքային փոխա-
ռութիւնը, ջրանցքը և քաղաքային բանկը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՅՈՒՄԱԿԱՔԻՆ

Նոյեմբերի 8-ին

Մեր Ախալքալաքի գաւառի գիւղացի երկրա-
գործ դասը վերջացրեց իր աշխատավարը: Իսկ
այժմ պարագայ տանը ընկած բանտարկվածի նը-
ման պէտք է անցկացնէ ձմեռվայ երկար ժամա-
նակները: Ահա թէ ինչպէս են անցկացնում նը-
րանք այդ ժամանակները. հաւաքվելով 30—40
մարդ որ և իցէ մի պաշտօնատար կամ քեղաւ-
ղայի (գիւղերի նշանաւոր անձի) խնամքի անկա-
նութ, իրանց սովորական համաձայն, մէկը միւսին

ձին, եղը, դոմէշը և այլն կը գովեն, կամ դանա-
զան դատարի վէճերով են զբաղվում և այդպիսով
անցկացնում են այդ անգին օրերը անօգուտ:

Մեր գիւղացին ոչ մի արհեստ կամ առևտուր
չը գիտէ և չէ էլ կամենում սովորելու. նա միայն
բաւականանում է հողագործութիւնով, և անհոգ
կենսքով և դրամով ամենաերջանիկ է իրան հա-
մարում: Ախալքալաքի գաւառի մէջ միայն բա-
ցառութիւն կարող են կազմել մի քանի գիւղերի
բնակիչը, որոնք, այս, ձմեռվան ասած ունեն
առանձին արմատաւորութիւն: Այսպէս ա-
սուած գիւղում գործում են խալիսեր և գորգեր,
գլխաւորապէս համարեա բոլոր գիւղերում գի-
տեն բրդից մանուկ (շալ) գործել: Այդ բոլորով
պարագմունքներ կանայք են, իսկ գլխաւորները,
բացի հողագործութիւնից, պարագում են և սա-
լապանութեամբ. նրանք երբեք իրուր չեն անց-
կացնում իրանց ազատ ժամանակները. կան
նոյնպէս մի երկու գիւղերում առևտրով պա-
րագմունք, որոնք յարաբերութիւն ունեն Թիֆլի-
սի վաճառականութեան հետ:

Մեր հայ գիւղացին շատ յետ է մնացել ամեն
բանից: Թէ արհեստից և թէ ուսումից, թող
օրինակ առնէ զոնե լեռնաբնակներից (չէչէն-
ներից և լեզգիներից): Այդ ազգաբնակչութիւնները
իրանց ընդունակութեամբ և անխնայ աշխատու-
թեամբ նշանաւոր են ամեն մի բանում, զրանց
մէջ տարածված են շատ արհեստներ, գործում են
լաւ մանուկ, մետաքսեղեն, գորգեր, երկաթեղեն,
երկաթեղեն, պղնձեղեն, ձիւռ թամբեր, գէշեր,
արծաթագործութիւն, կոշիկագործութիւն և այլն: Այդ
արհեստներով, որոնք առանձին ոյժի են կարօտ,
պարագում են գլխաւորապէս կանայք. այդ բո-
լորին եւ շատ անգամ աղանաւորն եւ եղած Տեր-
կի նահանգում եղած ժամանակներ: Յանկալի է
այս, որ մեր գիւղացիք հետեւին այդ լեռնա-
ցիների օրինակին, աշխատեն սովորելու գոնեա
այն արհեստները, որոնք նրանք մեծ կարելի և ան-
հրաժեշտ հարկաւորութիւն ունեն: Ամբողջ գաւա-
ռում մի պայտուտ չէ գտնվում. եթէ յանկարծ հար-
կաւորվեցաւ. ձի նալի տալու, գիւղացին իր գործը
վար գցած՝ տանում է քաղաք. բացի անգործ անց-
կացնելուց այդ ամառային երկրաբոլորական աշ-
խատութեան թանգ օրերը ենթարկվում է գաւառի
ծախսերի, չըբնելով գինեւանութեան: Մեր գիւղացին
հում նիւթեղենը՝ ոչխարի բուրդը, անասունների
կաշին և այլն տանում է քաղաք և ծախում է
ամենաչնչին գնով և յետոյ ինքը իր ծախած մը-
թեղեններից չինված իրեղենները գնում է վճարե-
լով դրանց ամենաբարձր գին իր արեան քրտին-
քով աշխատած կոպէկներից: Մեր գաւառի գիւ-
ղացիք ձմեռվայ երկար ժամանակները փոխա-
նակ խնամքներում աննպատակ չըջաղայելու և
դատարկաբանութեամբ պարագելու, շատ լաւ կա-
նեն, եթէ ձեռնարկէին սովորելու հարկաւորեալ
արհեստները և յետոյ տարածէին այդպիսի գիւ-
ղերում, որով մեծ օգուտ կարող էին բերել, թէ
իրանց և թէ ժողովրդին: Այս, շատ գեղեցիկ բան
կը լինէր այդ, բայց ձի պէտք է հասկացնէ գիւ-
ղացուն դրա օգուտը. պարզ բան է ուսուցիչը և
միւս կողմից գաւառում նշանակութիւն ունեցող
անձը: Եթէ քիչ շատ մեր գիւղացիների կենսքին
ծանօթ մարդ լինի, կարող է գիտենալ, որ եթէ
նրանց հասկացնելու լինի որ և իցէ մի մարդ ար-
հեստի օգուտները, նրանք այդպիսի առաջարկու-
թիւններին աստիկ արհամարհանքով են վերաբե-
րում, իսկ եթէ վարչութեան ծառայողներից ա-
ռաջարկվի այդ, այն ժամանակն են նրանք հա-
կանում և ամեն ջանք գործ դրած՝ աշխատում
են բանը գլուխ բերելու:

Ուրեմն, կարծեմ աւելորդ չէ լինի իմ կողմից
խնդրել մեր գաւառական վարչութեան պ. պ.
աստիճանաւորներից, որոնք շատ անգամ չըբնում
են գաւառում և գլխաւորապէս մեր քաղաքի պը-
րիստաւ պ. Աւետիքեանցին, որը ամենից շատ է
չըբնում գաւառում գաւառագետի յանձնարարու-
թեամբ առանձին պաշտօնական գործերով, առա-
ջարկել խղճալի գիւղացիներին այդ ցանկալի և
օգտակար գործին ձեռնարկելու, համարել և հա-
կացնել ամբողջ գիւղացին արհեստի օգուտը և պարագու-
թեան վատ հետեւները: Գաւառի մեր պարագու-
թեան վատ հետեւները, որ հասարակական վիճակում
մի քանի գիւղերում, ինչպէս որ հայտնի է, որ քաղա-
քային կրեդիտը, որպէս զի նրանով շահվեն
միայն վաճառականները, իսկ երբ բանկը
կը մասնականայ, պատասխանատու է ամբողջ
քաղաքը, պատասխանատու են այն մարդիկ,
որոնք այդ բանկից ամենեւին չէին օգտվում,
—գա, կարելի է ասել, անարդար է:

Ջարկէր խղճալի գիւղացիներին այդ ցանկալի և
օգտակար գործին ձեռնարկելու, համարել և հա-
կացնել ամբողջ գիւղացին արհեստի օգուտը և պարագու-
թեան վատ հետեւները: Գաւառի մեր պարագու-
թեան վատ հետեւները, որ հասարակական վիճակում
մի քանի գիւղերում, ինչպէս որ հայտնի է, որ քաղա-
քային կրեդիտը, որպէս զի նրանով շահվեն
միայն վաճառականները, իսկ երբ բանկը
կը մասնականայ, պատասխանատու է ամբողջ
քաղաքը, պատասխանատու են այն մարդիկ,
որոնք այդ բանկից ամենեւին չէին օգտվում,
—գա, կարելի է ասել, անարդար է:

Մեր քաղաքը նոյնպէս շատ հեռու է մնացել
ուրիշ քաղաքներից ամեն մի բանում. հայրը պա-
հանջում է որդուց հետեւել իրան նոյն կորստաբեր
շաւղով, որին ինքը զոքաղաքար ձեռնարկել է.
նոքա չեն ժողովում, որ եթէ ուրիշը իրանց կա-
մակորութեան հետեւին, ապագայում ինչպիսի թը-
շուտ գրութեան պէտք է ենթարկվեն: Ամեն
մի ծնողը վրա կայ սուրբ պարտականութիւն որ-
դոց դատարարելու. համար, որ նոքա հետեւելով
աշխարհի հոռանքին, այլ եւ չը ստիպեն իրանց
որդոց, որ նրանք կուրօրին հետեւեն նրանց կա-
մակորութեանը, ինչպէս իսկ ձեռնարկելին, աշխա-
տանքի փրկել նրանց կենսքը աշխարհի պա-
տանոց դանազան թշուառ գրութիւնից, միջոց տա-
լով որդոց ապագայ գրութիւնը բարեկեցու: Ախալ-
քալաքը այժմ ընկած գրութեան մէջ է առևտուր չը
լինելու պատճառով, թէպէտ 1877—78 ուսու-
տանական պատերազմի ժամանակ բաւականին
շահվեցան, բայց շատերը այդ աշխատած հողերը
վաճակեցին. ամեն մէկի բեղաւոր, նրանց հետ խո-
սելիս, այժմ լուրում է անբաւականութիւն իր դը-
րութիւնից, բայց չը նայելով այդ ցաւալի հան-
գաւանքներին, այնու ամենայնիւ, նրանք չու-
ծակներից երբեք յետ չեն մնալ:

Մեր քաղաքում տարածված է մի վատ ախտ
ևս, այն է մեծամասնութիւնը թէ պարագութիւ-
նից և թէ սովորականից ստիպված զբաղված է
զրպարտութիւններով և բամբակաբերութիւնով, շատերը
կան, որ միախառնվում են բանանց հետ անց կաց-
նում իրանց ժամերը այսպէս. հետաքրքրվում
են որ և իցէ մէկի անձնաւորութեամբ և դրանում
գտնում են իրանց ամենաբաղձր բաւականութիւն-
ները: Կան նոյնպէս շատ բարեհոգի քաղաքացի-
ներ որոնք թշնամական անհիմն զրպարտու-
թեամբ, վայր են գցում մարդու վարկը: Ամեն
որ զգուշը և ատելութիւն է զգում դէպի այդ
ամենակեղտոտ և չարաւեղու պարտները, ո-
րոնք անամօթ կերպով աշխատում են իրանց չա-
րաւեղութեամբ մինչև անգամ ընտանեկան խաղա-
ղութիւնը վրդովել: Մեր քաղաքի ինտելիգեն-
ցիան չըջաղապարծ է այդպիսի բամբակաբե-
րով, զրպարտութիւններով. երիտասարդութիւնը
հեռու է պահում իրան շատ գործերից, այդ մա-
սին դոցա երբեք մեղադրել չէ կարելի, որովհե-
տեւ նոքա գործունեութիւններին համարողները
շատ քիչ կան: Գլխաւորապէս երիտասարդութեան
գործունեայ և եռանդով աշխատողներն են հայր Ս.
Գեմիլըզլեանց և պ. Ս. Մառանկոյեանց, բայց
պիտոս որ այդ երիտասարդներին քաջաբերդներ
և օգնողներ չը կան. եթէ պահանջներ այդ մեր
հասարակութեան մէջ քիչ շատ նշանակութիւն

ունեցող անձինքներէ, զոյս էլ մօտիկից ճանաչում ենք թէ ինչ բարեհոգի պատուներ են. չարժէ անգամ գրիչ չարժէ զոյս մասին. մնացեալ հասարակ ժողովրդից, ի հարկէ, ոչինչ չէ կարելի սպասել, քանի որ նոքա նախապաշարված կուրօրէն հետեւում են ուրիշ պարտիներին: Այս, շատ ծիծաղելի, միայնգաման պախարակելի կը լինէր, եթէ եւս այստեղ մասամբ եւս նկարագրէի մեր այժմեան ուսումնարանները զրոյթները, բայց երբ ուսումնարանը զգլեցրել է մեր հասարակութեան շատերին, պոռոտախօսներին, եւ հարկադրված պէտք է լուծւ. բայց կը դալ ժամանակ, որ նոքա կը հասկանան ուսումնարանի անհրաժեշտ բարոյական կարիքը և դիտեմ պէտք է զգլան. բայց ի դուր, որովհետեւ այս օրերը անհրաժեշտ կը լինեն մեզ համար, այն ժամանակը զգում եմ որ նոքա պէտք է մի օր յիշեն այս խօսքը: Թողնենք այդ ամենը, ասեմք օրիորդական ուսումնարանի վարժուհի տիկին Ղարապետեանցի վերաբերութեամբ մի քանի խօսք: Տիկին Ղարապետեանցը 1876 թ. մինչև այժմ օր. ուսումնարանի վարժուհի է եղած. արդեօք բերել է նա մեր ուսումնարաններին որ և իցէ մի օգուտ, թողնենք այդ ամենը. տիկինը մեր ուսումնարաններին կարող է միշտ նպաստել, եթէ ինքը ցանկանայ. որովհետեւ նա մեր քաղաքի կանանցից, ըստ կարծեաց, միակ կարող է լինել իր գիտութեամբ և զարգացումով. ուստի եթէ տիկինը մասնակցել տեղիս հայ թատրոնաւորներին խմբին, մեր ուսումնարաններին թէ նիւթականապէս և թէ դրօնականապէս կօզնէր, բացի այդ կարող էր օրինակել լինել մեր օրիորդներին և տիկիններին:

Ս. Գ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ձեր լրագրի № 192 մէջ կարգացի մի դառն արտայայտութիւն, որ ուղղված էր յատկապէս իմ անձնատուութեան դէմ: Այդ նամակի մէջ պատուելի անանուն հեղինակը արժան է համարել «անտարբեր» փառաւոր անձանով պատկեր ինձ. անտարբեր դէպի որ բան, դէպի մի սուրբ հիմնարկութիւն, դէպի ուսումնարան: Ես թէ եւս մտադիր էի իրենից ստացած այդ անպատեհ պատասխանի իրեն, այն է մի սառն արհամարհանքով և անտարբերութեամբ, բայց որովհետեւ պատուելի անանուն նամակագիր խօսքերը ուղղակի յարձակում են իմ վրա և մի լոկ արարատութիւն, ցոյց տալով մի և նոյն ժամանակ, որ ես իմ մանրակրկիտ վարմունքովս կամեցել եմ ուսումնարանի օգուտները չօգտիլ, վատնելով արժան համարեցի առ այժմ այս երկուող բանը գրել և խնդրել ձեզինք, աղիւս խնդրել, որ բարեհաճէք տեղի տալ ձեր պատական լրագրի մէջ ճշմարտութիւնը վերականգնելու համար: Շատ ցաւալի երեւոյթ է, որ կը տեսնես տակաւին թէ մարդիկ կան մեր ազգի մէջ, որոնք իրենց կիկըր, աստուծոյնը և դառնութիւն քղաբարձ կեղծ ազգասիրական վարազուրի տակ, հրապարակ են դուրս գալիս լրադրական ասպարիզում իրենց վրէժը լուծելու այս կամ այն անձնատուութիւնից, ցոյց տալով իրենց ծայրագոյն ծառայութիւնը, և եւս անհոգ ազգի՞ն իսկ ոտիս թշնամութիւնը, աստուծոյնը և անտարբերութիւնը դէպի ազգային հիմնարկութիւնները: Խնդրեմ ասացէք, մեծարդոյ տէր, մի վարդապետի համար, որ մանկութիւնից սկսած իր անձն նուիրած լինի իր ք. եկեղեցու և ժողովուրդի ծառայութեան, ինչ աւելի նուիրական, փախագլիւի և դուրս գալի կարող է լինել քան զայն, երբ տեսնէ իր ազգի դաւանները բարոյական և ուսումնական կրթութեանց և գիտութեանց մէջ առաջացած. և եւս խոստովանում եմ, որ այդ է եղել և է իմ միակ փախագլը և հոգեկան ցանկութիւնը, և դուրս գեմ մեղանշել և չօգտիլ կամեալ որ և իցէ ուսումնարանի օգուտները, լինի նա թէ նիւթական և թէ բարոյական, եւ իմ կողմանէ համարում եմ աններելի սխալ և սրբապղծութիւն: Այստեղ մի կէտ կայ միայն ուղղելու. պատուելի անանուն նամակագիրը թերեւս փոխանակ ասելու թէ իրեն անձնական օգուտները և շահերը չօգտիւմ լինիմ, սխալմամբ դուցէ արտասանած լինի ուսումնարանի անուն, այդ էլ հոգ չէ: Պատուելի նամակագիրը իր ծայրագոյն գիտութիւնը և բարձր ուսումը և ինձ նման խնդր վարդապետի տղիտութիւնը ցոյց տալ կամեալով, այսպէս է գրիչն առաջ տանում: Թէ շատերը ուսուցիչներէ ի վերուստ էին նայում վարդապետի արարմանց վրա և ներդա-

մտութեամբ էին տանում ամեն բան, հետեւելով այն առածին «թէ որին շատ է տուած, նորանից շատ պիտի պահանջվի, որին սակաւ—սակաւ»: Նույնու հոգեւոր ուսումնարանը անցեալ տարի ունէր երեք վարժապետ, մի կրօնուսոյց և մի ճայնարարութեան դասասաց քահանայ: Չր գիտենք թէ ով է այդ վարժապետը, որ իր ծայրացեալ գիտութեամբ շատ և շատ բարձրից և մինչև անգամ Ողիմպոսի լեռան ծայրէն էր նայում վարժապետի արարմանց վրա. և ինչ էին այդ արարմունքները, բացատրութեան կարօտութիւն ունէլ: Թող ներէ մեզ պատուելի թղթակիցը հարցնել, թէ ով կարող է երաշխաւոր լինել նաեւ այդքան բարձրից նայողին, եթէ զբաղողբար աչքերն էլ ցաւազար լինեն, թէ նա նուրբ և պարզ կերպով կարող է նկատել և որոշել իւրաքանչիւր առարկան: Ես ուրախութեամբ կը տանէի, եթէ այդ վարժապետ ասածը, լինէր շատ բարձր մտքի և զարգացման և վերջապէս բարոյականութեան տէր մի մարդ, որ այդքան բարձրից նայած լինէր վարժապետի չը գիտեմ որ թերի կողմերին, և այնպէս զբաղաւորած. դրանից աւելի հոգեկան մը-տիկութեամբ չէր կարող լինել ինձ համար, և ես կը խոստովանեմ ճշմարտապէս, եթէ արեւմտեան զանազան այդպիսի մի անհամեմատ զեղեցիկ մտքի և զարգացման և բարի զգացմանց տէր մի վարժապետ, որ մէկ կողմ դրած իր անձնական շահերը, ճշմարիտ մարդասիրական և ցաւակցական հոգով արտասանած լինէր այդ բառերը, և նորա սրտի խորքերից բղրած այդ խօսքերը լինէին լոկ անկեղծ ճշմարտասիրական զգացմունքից առաջացած և ոչ թէ կրքից և աստիճանից, այն, այն ժամանակ կանամ եւս ուրախութեամբ մէկ կողմ դրած իմ վարժապետական նշանակութիւնը, (որ 40 տարին աւելի է կը ծառայեմ իմ ազգին և եկեղեցու) և ծոնկ չընած այդպիսի մի գերազանց զարգացման ունեցող պրօֆեսորի առաջ հոգու միտքարութեամբ կը լսէի նորա լեցիկները. բայց արեւոտ, որ իրենք իրենց խաբում են և ինչպէս իրենց են խաբում, այնպէս էլ աշխատում են որ ամբողջ հասարակութիւնը խաբեն, ցոյց տալով թէ իրենք միայն ազգի բարեբար բարեկամներն են, իսկ վարդապետը, ուրիշ այլ ինչ սը. պարտականութիւն չունի, իբր թշնամի. թէ եւս հասարակութիւնը արթուն է և գիտէ իւրաքանչիւր արժանաւորութեանց և անարժանաւորութեանց չափ և սահման դնել և գնահատել: Եթէ պատուելի անանուն նամակագիրը իր իրեն սե. քօղը մի կողմ ձգէ և այնպէս դուրս գայ հրապարակ իր անկեղծ ասելու, ինչպէս եւս ահա ստորագրում եմ իմ անունս, այն ժամանակ ճշմարտութիւնը արեւմտական լուսի նման յայտնի կերեալ և խաբեարայութիւնը իր իսաւարային մեքենաներով կը խայտառակվէր. այն, այն ժամանակ միայն պարզօրէն կերեալ վարդապետի անտարբերութեամբ ուսումնարանին տուած օգուտները, և պատուելի նամակագիր տարբերութեամբ տուած վնասները, իսկ եթէ միշտ ծածկված անյայտութեան և միտքեան խաւարի մէջ կը սկսի բերնից դուրս թափել և փայթել, այն ժամանակ թող ներվի մեզ ասել, որ ամեն չարութեանց և խռովութեանց բուն ու պատճառը, եթէ կան, այդ անանուն նամակագիրն ինքն է: Թող ներվի ինձ ասել, որ նա վնասողործ է, աշխատող ձեռներ յուսահատեցնող է, լոյսը խաւար և խաւարը լոյս ասող է, ձուռնաբան փրկիւն ստիպարութեամբ, և բոժոժած աչքերով ժողովուրդի բարին իբր չար նկատող է, և այսպիսիներին էլ ըստ իմ կարծեաց, ոչինչ պատասխան պէտք չէ տալ, թէ կուզէ որպիսի և իցէ ծայրագոյն զբաղութիւններ և ստուծիւններ ասելու լինի և գրեւոր, որովհետեւ ժամանակի դուր կորուստ կը լինի: Ես երախտապարտ կը ճանաչեի ինձ, եթէ պատուելի նամակագիրը բարեհաճէր օրինաւոր փախտով յականջ անուանէ ցոյց տալ թէ որպիսի օգուտներ ուսումնարանին եւ չօգտիլու ցանկութիւն ունեցել եմ, բայց ուսումնարանի ներքին և արտաքին կապը ամուր պահպանող հոգաբարձուք չեն թողուցեր: Ուսումնարանի հոգաբարձուք այդպիսի երեակայեալ նախազախարմունք երբեք չեն ունեցել, եթէ ունեցել են, խնդրում եմ հրապարակաւ խօսնել և ցոյց տալ այն վնասները, և թէ ինչ բանում է կայանում երեակայեալ տուած վնասը, բարոյական է այն թէ նիւթական: Պատուելի նամակագիրն եթէ ինքն աղիւս է, և իրեն գործածը չարամտութիւն չէ և վստահ է իր գրածին և խօսեցածին ճշմարտութեան վրա, թող սիրտ անէ բարեհաճի լաբերիւնթոսից դուրս գալ և այնպէս ուսումնարանին իմ տուած վնասները փախտով ա-

պացուցանէ, այն, ասում եմ, այն ժամանակ ևս չնորհալալ կը լինիմ: Կամելով առ այժմ վերջ տալ խօսքիս, չեմ կարողանում չը հրաւիրել մեր ընթերցող բանասէր և ուսումնասէր հասարակութեան մտադրութիւնը պատուելի նամակագիր զառանցանաց վրա, որ ընդդէմ է բուն իսկ հայաստանեաց եկեղեցու ոգուն: Պատուելի անանուն հեղինակը սե սե ամպերի տակից մի սպառնալից հայացք ձգելով իր երեակայեալ երկպառակութեանց վրա, որ, ինչպէս կարծում է, կայանում է մի միայն իր մէջ, սաստիկ բուրժուալ սպառնալիք է արձակում Նույնու ամբողջ հայ հասարակութեան դէմ այսպիսի խօսքերով «թէ եւս յուսալ շատ զփուար է, բայց և այնպէս մենք դեռ միտքարում ենք մեզ յուսով, որ Նույնու հայ հասարակութեան բանիմաց մարդը հեռառակութեամբ կը նայեն խնդրին, (ինչ ինչից) և կը ջանան երկպառակութեանց առաջն առնել, և տեղիք չը տալ նրա ընդարձակելուն, սակայն երբ կը տեսնենք, որ սխալված ենք, և հասարակութիւնը չի արգաւայցի մեր ակնկալութիւնը, այն ժամանակ մենք սրբազան պարտք կը համարենք մանրամասնօրէն խօսել այս երկպառակութեան ծագման մասին և աւելի աշխուրջ կերպով մերկացնել չարութիւն սերմանողներին բոլոր իրենց զոյներով: Վիտէր, մեծարմիտ ընկաւ այստեղ: Անանուն նամակագիրը Նույնու քաղաքի ամբողջ հասարակութիւնը ըստ խալված է կարծում, իսկ ինքն անսխալ, ուստի և ըստ այնմ սպառնալիք է արձակում. ինչպէս յայտնի է մեծարդոյ և աղիւս ընթերցողաց, հայ ժողովուրդը դարեւոր ժամանակներուց սկսեալ իր վճռաբան զանալներով մինչև վերջին անհատ անձն ընդդէմ է եղել ձուլումայ անխալակաւորութեան սկզբունքին, իսկ այստեղ պատուելի նամակագիրը առանց ակնածելու վտանգանում է նոյնը քարոզելու, իրեն անսխալական ցոյց տալով է մի ամբողջ հայ հասարակութիւն—սխալական: Եթէ այդ էլ անտակտութիւն չէ, ապա ուրեմն, ինչ բանի պէտք է վերադրել: Ըստ իմ կարծեաց պատուելի նամակագիրը որքան էլ բարձր գիտութեան և փրկիւնօրէնութեան հասած լինէր, չը պիտի թողարկէ իրեն արհամարհել մի հասարակութեան ընդհանրութեան կարծիքը և փրկաւորել ասիւով թէ սխալված են, իսկ ինքն միայն մնացած է անսխալ: Ես իբրեւ բարեկամ պարսն նամակագիրին, խորհուրդ կը տամ իրեն, որ այդ բարձրութիւնից մի փոքր ցածր իջնելով մի կողմ ձգէ իր անձնական շահը և օգուտը և նուրբ հոգալ աչքը ուղղել նալ ժամանակակից անցքերին և ամեն մի հիմնարկութեան և իրաւանց, և այնպէս յետոյ գրիչ ձեռք առնէ հաստատուն փաստերով իր խօսեցածը և զրաժը ապացուցանելու իր ստորագրութեամբ, այն ժամանակ միայն կարելի կը լինի առանց խղճին վնաս հասցնելու երևան հասարակութեան, իրաւանքները իրենց անհատականութիւն կը համարեմ նորա ամեն մի գրածին և պահանջածին պատասխանել ամեն արդարութեամբ, ապա թէ ոչ, կը յուսամ որ ինձ հետ կը համաձայնեն աղիւս և մեծարդոյ ընթերցողներ համարելով այդ տեսակ զբաղարիչ նամակագիրներ, ժողովուրդի խաղաղութիւնը վրդովող բանասիրուներ և չարամիտներ, և իրենց անձնական շահը միայն մտածողներ, ուստի և անարժան իսկ պատասխանապարտութեան: Փոխանորդ Նույնու՝ Սարգիս վարդապետ Տեր-Ղասաբեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 10 նոյեմբերի

Վարժապետ ինչ երեք համարները արդէն հրատարակեցան. բայց նրա մասին մինչև օրս գրեթէ ոչինչ չտպեցաւ: Մենք էլ, ոչինչ չը խօսելով այդ մեր միակ մասնագիտական ամսագրի ուղղութեան, բողոքարկութեան և առհասարակ արժանաւորութեանց ու թերութեանց մասին, այս անգամ ուղում ենք մի նկատողութիւն անել նրա մանկական բաժնի վերաբերութեամբ: Խօսելով այդ բաժնում տպված «Աշակերտ», «Հին գերեզմանաքար», «Օրիորդ Ինգէն», Մըր-ջիններ», «Ջիւղիօրիակ», «Խնձորների օր», «Իր-

խունն ու վարդի թուփը» և «Վիլու» վերնագրով մեծ ու փոքր հատուածներ լրա, որոնց կէտը Անդերսէնի հեղափոխող գրչի ծնունդ են, պէտք է ասել, որ ընդհանրապէս նիւթի վերաբերութեամբ բաւական յաջող ընտրութիւն է արված: Գրանք գրեթէ ամենքն էլ մանկական հասակի համար գրաւիչ, հարցապարական և խրատական գրուածներ են: Բայց մի և նոյնը չենք կարող ասել նոցա թարգմանական յատկութեան մասին: Լեզուն, որ մանկական գրքերի մէջ, մանուկներին առաջարկված նիւթի ներքին արժանաւորութեան չափ նշանաւոր դեր ունի կատարելու, և որ մանուկներին կրթութեան նկատմամբ մեծ խորհուրդ ունի թաղցրած իր մէջ—այստեղ, ցաւելով պէտք է ասենք, ոչ միայն մեղաւն չունի է իր տարրական օրէնքներ իր դէմ, ոչ միայն դուրս է հարկաւոր եղածին չափ կ ո կ, սահուն, մանկական և, որ գլխաւորն է, հայկական լինելու ընդունակութիւն չունի, այլ և, կարելի է ասել, ըստ ամենայնի անհամապատասխան է մանկական գրուածների համար: Իսկ զա փոքր պակասութիւն չէ: Շատ չերկարացնելու և մեր ասածները անպարտք չը թողնելու համար՝ բերենք նոյն իսկ այդ թարգմանութիւններից մի քանի օրինակ: 15-րդ երես.—պէտք է այդ վատ արմատն ինձանից հանել է ինչ, եթէ մէջս կար: 36—Եթէ դուք աշխատել է ի՞նչ մտաւորապէս, այն ժամանակ մի բան կը դուրս գար: Հարկաւոր էր ասել, «պէտք է հանել ինչ և «Եթէ աշխատել է ի՞նչ: 16—Ես լսում էր որ նորա արարմունքը պատմում էին երեխանց... 19—Նորան թուում էր, որ նորա համար երբեք չեն բացել ոչորումութեան դռները: Վերոգրեալ երկու նախադասութեանց մէջս էլ նորա բառի փոխանակ պէտք է գրել «իւր»: 39—Կ ու ու երբ դի տես, որ իրանց ձագերը, իր աւելի բաւ կիւս պիտի ուրիշ թուշններին մօտ, քան թէ իւր մօտ: Պէտք է ասել՝ «Վիլուները դիտեն, որ իրանց ձագերը ուրիշ թուշններին մօտ աւելի բաւ կիւս բերն, քան թէ իւրանց մօտ»: 33—Ես (խնձորը) սահում է ատամներ ի տակից դ: Ի հարկէ, պէտք է ասել՝ «ատամներ ի տակից դ»: 13—Հորերի իւրաքանչիւր ծաւի մէջ նստած էր մի մի անաղին գորտ: 38—Ամէն մէկ թուշններն մի մի կ ու եղաւ: Պէտք է ասել՝ «Իւրաքանչիւր ծաւի մէջ նստած էր մի... գորտ»: և «ամեն մէկ թուշնի մի կ ու եղաւ»: 31—Ես միշտ երգել սկսողն է և մենք էլ նորա հետ շարունակում: Այդպէս չէ կարելի խօսել: Կամ պէտք է ասել՝ «նա միշտ երգել սկսողն է, մենք էլ նորա հետ շարունակողը»: Կամ՝ «Միշտ նա է սկսում երգել, մենք էլ շարունակողն ենք հետք»: 3—Երկար վարդապետները կախ էին արած... և նոցա ծայրը դիտեն հասունում: 4—Երեւոյնին հետեւեալ ողորուում էր, նորա թշնըր կարմրում է: 6—Որդին կան գնաց... ակնուր լեռայ և նա յուսում դէպի բալը: 21—Թուաւ նա դէպի քաղաք և նայում ամալն կողմ: Երկուրդ ստորագրանքը պէտք է օժանդակ բայի հետ լինեն գրուած—«էին հասունում, կարմրում էին, նայում էր»: որովհետեւ օժանդակ բայն միայն այն ժամանակ կարելի է դրուութեամբ հատկացնել տալ, երբ նորա բացակայութեամբ ոչ նախադասութեան միտքն է թերի մնում, ոչ մտքի խանգարմունք է առաջ գալիս, այլ ընդհանրապէս մի առանձին ներդաշնակութիւն է ընկնում մտքի մասունքների դասաւորութեան մէջ: 34—Միւսներ ի նման եւս չեմ տալ միայն վարդեր, կարծիք և կաթը՝ վարդի թփի, կաղնու ծառերի և կ ո վերի ու ոչ խաւսերի պէս: Պէտք է ասել՝ «Ես ոչ վարդի թփի պէս միայն վարդ կը տամ, ոչ կաղնիների պէս՝ կաղին և ոչ կողերի ու ոչ խաւսերի պէս՝ միայն կաթը»: 33—առաջուց գուշակութեան անհիմն բան է եղած:

Պէտք է ասել՝ ճառագայթ գուշակութիւն անհ-
լը...»:

36—Միթէ չը պէտք է տալ միւսներին,
ինչ որ կարող ենք:

Կամ՝ «միթէ չը պէտք է տալ ուրիշներին,
ինչ որ կարող ենք տալ»:

Կամ՝ «միթէ չը պէտք է տալ ուրիշներին,
ինչ որ կարող ենք տալ»:

19—անդունդի մէջ փայլեց մի լուսաւոր ճա-
ռագայթ աշխարհի ուրիշներին, որ զօ-
րեղ էր արեւգահլի վառ ճառագայթին հե-
րից:

Երբ ասել էք՝ անդունդի մէջ փայլեց մի լու-
սաւոր ճառագայթ աշխարհի ուրիշներին, որ-
պէտք է սպասել որ յետոյ աւելացնէ—որինակ
«մարդու աչք էր կուրացնում», կամ՝ չլուսաւորեց
նորա բոլոր միջին խորքերը և այլն:

Կամ պէտք է ասել՝ «անդունդի մէջ փայլեց
մի աշխարհի ուրիշներին, որ արեւգահլի
վառ ճառագայթներէն էլ զօրեղ էր...»:

18—Ինչէն... տեսաւ, որ նորա վերայ փայլե-
ցան երկու աստղեր՝ այնտեղ բարձր, երկրի վե-
րայ մի մեծոտի համաստ աչքերն էին:

Խոստովանեցէք, որ մասնակց շատ դուրս պէտք
է կտորի այդ նախադասութիւնից մի բան հա-
կանաւոր համար:

Բայց, իհարկէ, «վարժարանի» նպատակը այդ
չէ:—

Յաջորդութիւն և յարատեւութիւն ցանկանալով
մեր նորածին մանկավարժական ամսագրին՝ յու-
սով ենք, որ նա իր պարտականութիւններէն մե-
կը կը համարի ներդրելու և խոստովանելու ի-
նչ ինչպէս թարգմանելի նիւթերու, այնպէս էլ
թարգմանութեան լեզուի վերաբերութեամբ: Այն-
պէս չը լինի, որ յետոյ ասեն թէ, «վարժարանը»
մեր մանկներին լաւ ընթերցանութեան նիւթեր
տուց, բայց ախիս, որ «լաւ լեզու» չը տուց:

Յ. Նաղարեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կայրէից ստացված հեռագրի համաձայն, Անդ-
լիան բանակցում է Բոզլիլի հետ, որ այդ վեր-
ջինը գնի պետական կալուածները եղիպտական
կառավարութիւնից:

—Լէօն Սէ պնդում է մէկ յօդուածի մէջ, որ
տպւած է «Journal des Economistes» ամսագրի
մէջ, որ Ֆրանսիայի ֆինանսական դրութիւնը
խառնված է, և խորհուրդ է տալիս ծախել պե-
տական երկաթուղիները: Անդրիէ պատրաստում
է սահմանադրութեան փոփոխելու նախագիծը,
որի մէջ, ի միջի այլոց, առաջարկվում է ոչնչաց-
նել միջնորդների պատասխանատուութիւնը ամե-
րիկական կարգերի համաձայն:

—Կ. Պոլսից հեռագրում են նոյեմբերի 4-ին:
Թուրքացի զեապանը Լոնդոնում, Մոսկովում և Բա-
ղամիում, հաղորդում է Բ. Գրանը, որ խելովը ցանկու-
թիւն յայտնեց լորդ Գիւֆէրիին վերանորոգական
միջոցաւարտութեան յետոյ, այցելել Լոնդոն:

—Քննադատելով նախագահ Գրեյի հրաժարա-
կան տալու հաւանականութիւնը, Փարիզի լրա-
դիրները ասում են, որ նրա յաջորդ կարող է
լինել կամ գնեկը, կամ Գալիէ, նախկին դեսպանը
Պետերբուրգում, կամ պատգամաւորների ժողովի
այժմեան նախագահ Բլիսսոն:

—Լոնդոնից հեռագրում են նոյեմբերի 3-ին:
Թագուհին և իշխանուհին Բէտտրիսա այսօր առա-
ւօտ Զոտիանդիայից Վինձոր ժամանեցին:

—«Ինչպե՞րի ընկերութեանը» կայրէից հաղոր-
դում են: Անգլիական զբաղող զօրքի վերաբերու-
թեամբ և Եղիպտոսի պետական ապագայ կազմա-
կերպութեան մասին բանակցութիւնները դեռ
չեն սկսված: Լորդ Գիւֆէրիին, որ ներկայ ժամա-
նակում, զբաղված է երկրի քաղաքական և ֆի-
նանսական դրութեան հիմնաւորական ուսում-
նասիրութեամբ, ասին օր խորհրդակցում է տե-
ղական զանազան պաշտօնականների հետ: Նա շատ
քիչ է տեսնվում խելովի հետ:

—Կայրէից հեռագրում են նոյեմբերի 4-ին:
Երէկ քննադատող յանձնաժողովին, Արարի-փա-
շայի գործի վերաբերութեամբ, ցուցմունքներ էր
տալիս Սուլէյման-Գալիլը, որը խոստովանելու
թէ իրանը հրամայեցին Ալեքսանդրիան այրել:
Արարի-փաշայի վճռական հրամանից յետոյ՝ Վը-
կան մի և նոյն ժամանակ աւելացրեց, որ Արա-
րին մի քանի անգամ ուղարկեց Մահմուդ-Սալիին

իր մօտ, Սուլէյմանի մօտ, հրամայելով, թէ քա-
ղաքը պէտք է յանկարծ հրդեհել մի քանի ծայրե-
րից: Բայց իրանից յանկարծ 12-ին Արարին հրա-
մայեց սպանել խելովին Բամէ պալատում, և
երբ որ Սուլէյմանը յապաղում էր կատարել այդ
հրամանը, Արարին սկսեց յանդիմանել նրան երկ-
չոտութեան համար, այն ժամանակ նա, չորս
ղինորների ուղեկցութեամբ, Բամէ պալատը
գնաց: Համապարհին նրան հանդիպեց Սուլէյման-
փաշա: Վերջինը համոզեց Սուլէյմանին իր հետ
միասին վերադառնալ Արարի-փաշայի մօտ, ամ-
բողջ զօրքը կրկին անգամ քննելու համար:

—Լոնդոնից հեռագրում են նոյեմբերի 4-ին:
Մոսկովում փաշա, թիւրքացի զեապանը, այսօր,
Գալուստինի հետ տեսակցութեան ժամանակ, դի-
մեց նրան վերջնական պահանջով՝ ճանաչել սուլ-
թանին որպէս միապետ Եղիպտոսի վրա և հա-
մաձայնել, որ թիւրքացի կամիսարը գործակցի
լորդ Գիւֆէրիին: Կայրէից Գալուստին քաղա-
քութեամբ, բայց հաստատապէս մերժեց թիւրքաց
զեապանի պահանջը:

—Փարիզից հեռագրում են նոյեմբերի 5-ին:
Նախագահ Գրեյի կատարելապէս առողջացաւ:
Անդրիէ պատգամաւորների ժողովին արդէն ներ-
կայացրեց իր նախագիծը սահմանադրութեան վե-
րաքննութեան վերաբերութեամբ: Այդ նախագիծի
մէջ, ի միջի այլոց, առաջարկվում է հիմնել հա-
ւաքաւորութեան փոխ-նախագահի պաշտօնը, որը,
նախագահի մեռնելու դէպքում, ժամանակաւորա-
պէս կը փոխարինէր նրան:

—Լէօն Սէ յօդուածը, որ տպւած է «Journal
des Economistes» ամսագրում, մեծ աղմուկ է
բարձրացրել: Այդ յօդուածի մէջ նկարագրված է
Ֆրանսիական ֆինանսների տխուր դրութիւնը և
առաջարկվում է վերանորոգութիւնների մի պրո-
բլեմ: 1881—1882 թվ. ֆինանսական ճգնաժամի
չնորհի, պետութեան կրած վնասները, ասում է
հեղինակը, չեն թոյլ տալի փոխառութիւն անել
որքան և ինչ տանելի պայմաններով: Այնու ա-
մենայն, Սէ վճռական կերպով հակառակում է
պետական մեծ չիտուածների յետաձգելու մտքին:
Այդպիսի յետաձգումը, ազգային արդիւնաբե-
րութեան զարգացումը կանգնեցնելով, նրա
կարծիքով, երկրի ֆինանսական անանկութեան
պատճառ կը դառնար: Այդ դժբախտութեան ա-
ռաւջն առնելու միակ միջոցն է ծախել պետու-
թեան պատկանող երկաթուղիները:

—Վիննայի «Polit. Corresp.» լրագրին Կ.
Պոլսից գրում են նոյեմբերի 7-ից: Լորդ Գիւ-
ֆէրին իր ուղեգրիւց առաջ, վճռեց բո-
լոր վիճելի հարցերը, և իր օգնական պ. Ուիլյո-
զմայն թողեց հրահանգներ իւրաքանչիւր առար-
կայի վերաբերութեամբ առանձին, և խոստացաւ
նրան, որ նշանաւոր անդերլին ինքն կը հնարի
կայրէից: Վերանորոգութիւնների ծրագրեր մշա-
կելու համար սուլթանից նշանակված երեք յանձ-
նաժողովներից իսկապէս ծանր կերպով միայն
այն յանձնաժողովն է աշխատում, որը բիւրոք-
տով է պարագայ: Նրա զլխավոր նպատակն է ե-
կամուտները միմայնել: Սուլթանը խոր կերպով
համոզված է, որ եկամուտների աճելը հնարաւոր
է, եթէ միայն կաջողի պաշտօնականների մէջ գո-
ղութիւնը ոչնչացնել: Պ. Բլեքաւոր, սուլթանի
հետ տեսակցելու ժամանակ, շատ անգամ աղա-
ցուցանում էր, որ մաքաւային պաշտօնականների
ընդհանուր կաշառակերութեան պատճառով
զանազանը գրկվում է ահազին գումարներից:
Պ. Վլետտենգորֆ մասնագիտ արաւ նոյնպիսի
գեղձմեծների վրա վարչութեան և այլ ձեւերով:
Բիւրոքատի վերաբերութեամբ պարագլուխ յանձնա-
ժողովն է, իր կողմից պարագլուխ է այդ չարի-
քի առաջն առնելու միջոցներով: Մէկ հարց է
ծագում միայն, արդե՞ք կարելի է օգնականը հե-
տադիմանի հասնել, առանց վերանորոգութեան
ներքի և առանց միաժամանակ վերանորոգելու պե-
տական ամբողջ կազմակերպութիւնը: Երբ որ
ամբողջ օրդանիւրը հիւանդ է, արդե՞ք կարելի է
այդ օրդանիւրով միայն մի անգամը բժշկել, իսկ
մարմնի մնացած մասերը հիւանդ թողնել: Վար-
չութեան այս կամ այն ձեւում երբեք կաշառա-
կերութեան առաջ չէ կարելի առնել, եթէ մի և
նոյն ժամանակ, վարչութեան ուրիշ շրջանե-
րում, քաղաքական և արդիւնաբերական ասպա-
րէզի վրա, չը մտնի ուրեք և ինչ տանելի և
օրինաւոր կարգեր:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՀԻՍՏՈՐԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵՆՅՈՒՆ

ՍԿՈՒՆ, 11 նոյեմբերի: Գաղաքային վար-
չութեան նոր անդամներ են ընտրված:

ՕՐԵՍՍՍ, 11 նոյեմբերի: Օտար շոգենա-
ւերի բացակայութեան ժամանակ Մարսելի
և Լոնդոնի ֆրանսիացի բարձրացաւ:

ՊԵՐՆԵՎՈՒ, 11 նոյեմբերի: Այդ արդիւնա-
բերողները կամենում են երկաթուղիով
միացնել քաղաքը Սեվաստոպոլի գծի հետ:

ԽԱՐԿՈՎ, 11 նոյեմբերի: Բացվեցաւ լեռ-
նային արդիւնաբերողների եօթերորդ ժո-
ղովը:

ՄՈՍԿՎԱ, 11 նոյեմբերի: Նոյեմբերի 9-ին
սկսվեցաւ որբերի դատարանի գումարների
և թանգաղին իրերի քննութիւնը: Նոյեմ-
բերի 7-ին այրվեցաւ Մարկիեի կաշուէ գոր-
ծարանը: Վնասը հասնում է 400,000 ռուբ-
լու: Մօսկովայի համալսարանի գանձապահ
մեղադրված է գումարներ վատնելու համար:

ԱՐԽԱՆԳԵԼՍԿ, 11 նոյեմբերի: Նահանգի
մէջ 126 ուսումնարաններ կան, որոնց մէջ
սովորում են 6,100 աշակերտներ:

ԲԱՅՈՒ, 11 նոյեմբերի: Նաւաղանցու-
թիւնը դադարեցաւ: Մինչև նոյեմբեր գուրս
է տարված 12 միլիոնի կերօսին և 18 մի-
լիոնի նաւթի միացորդներ: Անցեալ տարվա-
նից երկու անգամ աւելի:

ԲԵՐԼԻՆ, 11 նոյեմբերի: Պատգամաւոր-
ների ժողովի մէջ ֆինանսների միւսիսարը
պնդում է, որ անհրաժեշտ է բարձրացնել
փայտի մաքսահարկը:

Կ. ՊՈԼՍ, 11 նոյեմբերի: Չերնոգորիան բա-
ցատրում է իր զինաւորութիւնը, որի զէմ
զանգաւորում է Բ. Գուրը, անհրաժեշտու-
թեամբ փչացած զինքերը փոխարինել նո-
բերով, որովհետեւ երկուսը է կրում այբան-
ցիների յարձակումից:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 նոյեմբերի: «Прав-
Бѣст.» լրագիրը հաղորդում է, «Страна»
լրագրի յօդուածը, որ կասկած է յայտնում
պետական զանձարանից պետական բանկին
50 միլիոն վճարելու մասին, անհիմն է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 նոյեմբերի: Կազանի
համալսարանի մէջ կատարված անկարգու-
թիւնների մասին լրացուցիչ տեղեկութիւն-
ները հեռագրներն են, հոկտեմբերի 29 մօտ
600 ուսանողներ, կտրելով ակտային դահ-
լիճի դռները, մտան այնտեղ, աղմկալի ժո-
ղով կազմեցին և խիստ ճառեր արտասանե-
ցին: Համալսարանական իշխանութեան և
մինչև անգամ հոգաբարձուի համոզելը ի
զուր եղաւ: Ուսանողները ներկայացրին ան-
ստորագիր մի պետիցիա, որ խիստ ձեռով
պահանջում է հեռացնել ֆիրսովին, նո-
րից ընդունել ուսանող Վորոնցովին և ստի-
պնել պետիցիայի բաժանումը ուսանողներին յանձ-
նել: Այնուհետեւ ժողովը ցրվեցաւ: 6 ժա-
մին, երբ խորհուրդը նիստ ուներ, ուսա-
նողները մի խումբ մտնելով էր համալսա-
րանին, բայց տեսնելով պոլիցիային, ցրվե-
ցաւ: Այդ ժամանակ նրանց առաջնորդները
սպառնում էին. «Այժմ մենք քիչ ենք, բայց
եզուց կը հաւաքվենք և կօչնչացնենք պո-
լիցիան»: Գիշերը համալսարանը պահպան-
ված է պոլիցիայից: Վաղ առաւօտունից
համալսարանի բոլոր մուտքերի մօտ զօրքեր
էին կանգնած և յայտարարութիւններ էին
կազմում դատաւարութիւնների դադարման
մասին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 նոյեմբերի: «Рус-
ский Инвалид» լրագրի մէջ տպված է
Բարձրագոյն հրաման կոմ Տոլբերինին վեց
ամսով արտասահման արձակելու մասին
խանդաված առողջութեան պատճառով:
Համապարհների հաղորդակցութեան մի-
նիստութիւնը մշակել է Ս. Պետերբուրգի
նաւահանգստի նախագիծը: Նիթադրված է
13 միլիոն ծախս: Մինիստրութիւնը կը
վճարէ արդեօք նաւահանգիստը զանաւորների
հաշուով կառուցանել թէ յանձնել մասնա-
ւոր ընկերութեանը: Նիթադրված է հեր-
թական դարձնել զլիւսահարկի ոչնչացնելը
բացի հող չունեցող զիւղացիներից և մեշ-
չաններից, նոյնպէս և այն զիւղական հա-
սարակութիւնների գիւղացիների համար,
որոնք ամենքից շատ կարօտ են հարկերի

փոքրացնելու: Վերջին ժամանակներում
զանձարանը յետ է առել 25 ոսկի հան-
քեր, որոնց արդիւնաշահելը դեռ չէր
սկսված: «Голосъ» լրագիրը հաղորդում
է, որ սինօդի այժմեան նիստերի ժամանակ
կը քննվեն հարցերը եկեղեցիների անտեսա-
կան մասի, հոգեւոր աղաքեմիաների և ծխա-
կան ուսումնարանների վերակազմութեան
վերաբերմամբ:

ԽԱՐԿՈՎ, 11 նոյեմբերի: Լեռնային ար-
դիւնաբերողների ժողովը Խարկովի մէջ չնոր-
հակալութիւն յայտնեց պետական կայքերի
և ճանապարհների հաղորդակցութեան մի-
նիստներին: Անցեալ ժողովի զեկուցումն
հաղորդում է, որ Նօբել շուտով պէտք է
հիմնել զինամիտի գործարան հարաւում: Գո-
նեսան երկրի արեւմտեան մասի մէջ ձայնվող
նիւթերի պահեստ է կառուցվում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 նոյեմբերի: Լեռնա-
յին բաժինը հրաւիրում է զեմստովներից
էկսպերտների ժողով քարածուխի հանքերի
վրա յօդուած զեմստովի հարկեր դնելու
հարցը քննելու համար: Օտար չուգունի
վրա 15 կ. մաքսահարկ դնելու նախագիծը
հաւանութիւն ստացաւ կառավարութիւ-
նից: Նիթադրված է օտար, նոյնպէս և ցա-
մաքով Մօսկով բերվող քարածուխի վրա
մաքսահարկ դնել 2 1/2 կ., Սե ծովը 3 1/2
կ., Լեհաստան 3 կ., Բալտեան ծովը 1 կ.:
«Новостн» լրագիրը հաղորդում է լուր,
որ ուսաց թղթի գործարանատերերը մտա-
ղիր են միջնորդել, որ ֆինանսական թղթ-
թի վրա մաքսահարկ դնվի:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵՆՅՈՒՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 նոյեմբերի: «Прав-
вн. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, ֆի-
նանսների միւսիսարը յայտնում է, որ «Стра-
на» լրագրի յօդուածը զանձարանից ներ-
կայ տարվայ մէջ պետական բանկին 50
միլիոն վճարելու մասին, որից իբր թէ ուե-
սաց արժէթղթերը ընկան Բերլինի բօրայի
վրա, անհիմն է: Կազանի համալսարանի
փակման պատճառն է քննել անկարգու-
թիւնների պատճառները և գտնել առաջ-
նորդներին: Գրա համար 5 անդամներից
կազմված մասնաժողով է նշանակված:

ԽԱՐԿՈՎ, 11 նոյեմբերի: Լեռնային ար-
դիւնաբերողների ժողովը բացվեցաւ երկրի
Նախագահ ընտրվեցաւ Խալախ: Անցեալ
ժողովի հաւատարմատարների զեկուցումն
նախագիծ առաջարկեց չուգունի պուդի
վրա 15 կ. մաքսահարկ դնելու մասին, որ
կառավարութիւնը ընդունեց սկզբունքով:
Երեւի քարածուխի վրա էլ մաքսահարկ կը
դնվի: Ցամաք ճանապարհով Մօսկով բեր-
վող քարածուխից 2 1/3 կ., Լեհաստան 3
կ., Սե ծովի նավահանգիստները 3 1/2 կ.,
Բալտեան ծովի նաւահանգիստները 1 կ.:
Կասսացիօնի բաժինը նոյեմբերի 10-ին դի-
շերը որոշեց իշխան Մինիստրութեան գործի վե-
րաբերութեամբ Անդրկովկասեան երկաթու-
ղու ընկերութեան հետ. Գուբայիսի նա-
հանգական դատարանի և թիֆլիսի դա-
տաստանական պալատայի վճիռը ոչնչացնել,
գործը քննել պալատայի անդամների նոր
կազմակերպութեամբ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 նոյեմբերի: Պետա-
կան բանկի 5% տոմսերը առաջին շրջանի
արժէ 93 ռ. 62 կ., երկրորդ 90 ռ. 87 կ.,
երրորդ 90 ռ. 37 1/2 կ., չորրորդ 90 ռ. 5
կ., հինգերորդ 89 ռ. 87 կ., ներքին 5%
առաջին փոխառութեան տոմսը արժէ
209 ռ. 50 կ., երկրորդ 202 ռ. 75 կ., ա-
րեւելեան առաջին փոխառութեան տոմսը
արժէ 88 ռ. 37 կ., երկրորդ 88 ռ. 37 կ.,
երրորդ 88 ռ. 37 կ., ոսկի 8 ռ. 35 կ.:
Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 23,65
պենս, Ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա
201 մարկ 25 պֆ., Փարիզի վրա 248
ֆրանկ 75 սանտիմ: Բօրայի տրամադրու-
թիւնը աւելի լաւ է:

Խալախը—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹՈՒՐԱՐԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ
սիւստեմատիքական ընթացք
Գրիգորի վարձերն
Հայոց միջնակարգ ուսումնարանների համար
մասն առաջին (ամբողջ թուեր)
Մամուլի տակից լոյս տեսաւ նոյն խնդիր-
ները երկրորդ մասը (կտորակ թուեր
և երրորդական կանոններ):
Գինն է 40 կոպ.
Ուսումնարաններին զիջումն 20%:
Ծախվում է վ. Շահվերդեանի լրագրական
գործակալության խանութում:
Օտար տեղերից զիջում են այս հասցեով
Тифлисъ, въ Агентство В. Шавердо-
ва:

ՏԵՐ-ԱՐԲԱՆԱՍԿՆԵՐ
Օ Ր Ա Յ Ո Յ Ց
Գինն է 10 կ. զուգարով զնոյններին
15% զիջումն
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՅԱՌԱՆՈՑՈՒՄ.
Նոյն տեղը
Պ. Միսնասարեանցի «ԳՆԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ»
մնացած օրինակները անկաղմ 2 ր.,
կազմած 2 ր. 50 կ.:
Տասնից աւելի զնոյններին 20% զիջումն:
(չ. և չ.) 2—6

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՈՆ
ԷՃԱՆԱՑՐԱՎ ԳՆԵՐՈՎ,
Կիրակի, նոյեմբերի 14-ին, Հայերեն
ներկայացումն
I.
Առաջին անգամ
Ա. Ղ. ԲԱՏՈՒԹԻՒՆԸ
ԱՐԱՏ 2Է
Կոմեդիա 3 արարուածով
II.
ԵՐԵԲ ԱՊՏԱԿ
Վճռվել 1 արարուածով:
2—2

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ ԶԻՆՆԵՐ աշ-
խատող լծիղը պիտանի ֆուրգոնների հա-
մար և այլն: Հասցեն «Երուսա» հիւրա-
նոց № 22
2—5 (1)

Վերջնական վաճառուի՝ չափազանց է-
ժանացրած գներով անդրկական սեղանի Ա-
ՄԱՆՆԵՐԻ և ՍԻԳԱՐՆԵՐԻ: ՄԵԼՄԱՆԻ խա-
նութի մէջ թիֆլիսում երևանեան հրապա-
րակի վրա № 13, տուն խմբովի:
1—3

ԹԻՖԼԻՍԻ ԳԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտնում է, որ ներկայ նոյեմբերի
14-ին կիրակի առաւօտեան 10 ժամին ԱՐ-
ԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՈՆԻՄ լինելու են ԵՐԿՐՈՐԳ
ԿԱՐԳԻ ԶԱՏՆԱՌՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
1883—1886 թ. չորս ամսակի համար:
3—3

Տրվում է ՎԱՐՁՈՎ մի լոյս ՍԵՆՆԱԿ
մեքենայ, վառարարի, սամովարով
և ծառայողի ամսական 12 րուբլով:
Կուկիայում, խարվովիսկայա փողոց, տուն
№ 9, ներքին յարկում:
ОТДАЕТСЯ одна свѣтлая КОМ-
НАТА съ мебелью, отоплениемъ,
самоваромъ и прислугою за 12
р. въ мѣсяцъ. Куки, Псарлов-
ская улица, домъ № 9, нижній
этажъ.
2—10

ԲԱՅՅԻ
ՈՍԿԵ ԱՔԱՂԱԳ
ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
Եւ վաճառվում է թիֆլիսում Կենտրո-
նական Գրավաճառանոցում
և
Հրատարակչի մոտ.
Գինն է ԳԵՂԵՏԻԿ ԿԱՏԱՄԵ 1 ր. 35 կ.
անկաղմ 1 ր.: —
Հրատարակչի հասցեն՝
Тифлисъ. Оаннесъ С. Степанянцъ
на фабрике Сали-оглы.
3—5

Թէ և ՈՍԿԵ ԱՔԱՂԱԳԻ Հրատարակութիւ-
նը պիտի լինէր պ. Ա. Ապրեսեանցի միջո-
ցաւ, միայն մի քանի իրերից անկախ պատ-
ճառներով պարտը այդ հրատարակութիւնը
յանձնեց մեզ, զարմեալ կրկնակի խաղա-
կան հաշուապահութեան բաժանորդներից
Խրաքանչիւրին իրան պատկանեալ մի գըր-
քոյը յանձնելով. ցանկացողները կարող են
այսուհետեւ զիմել մեզ.
ՅՈՎՀ. Ս. ՍՏԵՓԱՆԵԱՆՑ.
2—2

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ»
ԵՐԿՐՈՐԳ ՏԱՐՈՒՑ
Գասադիբը
«Կովկասեան գրախանութի» հրատարա-
կութեամբ և ծախվում է նոյն գրախանու-
թում:
Գինը 25 կոպէկ է:
Գումարով առնող և ԿԱՆԻԿ փճարողին
20% զիջումն կը լինի:
Կարելի է զիմել.
ТИФЛИСЪ. Кавказская книжная
торговля—З. П. Грикурову.
կամ
ТИФЛИСЪ. на Авлабарѣ. Оване-
су Назарянцъ.
8. Նազարեանց.

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳՈՒՄ իր ուսումն աւար-
տած ՄԱՆԿԱՐԱՐՁՈՒՅԻ ՍՏԷՓԱ-
ՆՈՎԱ
Կենում է Նազարեանց փողոցում, Ա-
միրովի տանը:
5—5

Սորվեցում է ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱ-
ԼԱԿԱՆ ՀԱՇՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ և ՌՈՒՍԱՑ Լեզուներով պայ-
մանների մասին կարող են զիմել ինձ մօտ
ԶՈՒԲԱԼՈՎԻ քարվասարայ, Գասպա-
րեանցի մագաղիսում ամեն ժամանակ:
ՄՄԲԱՏ ԳԻՏԱՏԱՐԵԱՆՑ

ԹԷՑ առաջին հունձի այս տարի չա-
փազանց զոյնաւոր և հոտաւետ: Այդ թէյից
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ
ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է
25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ
տեղ: Օրինակ. Լաւ ԿՈՆԳՈ թէյ 1 ր.—1 ր.
20 կոպ., պատուական ՍԱՆՏԱ թէյ 1 ր.
40 կ., հիւսնայի ՄՕՆԻԿ թէյ 1 ր. 60 կ.
այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ր.—2 ր.
50 կ., զեղեցիկ ԿԱՅՍԱՆԻ թէյ 1 ր. 80 կ.
և ամենալաւ ֆու-չու-ֆու թէյ 2 ր. մա-
քուր թէյ առանց թղթի: Նոյն տեղը սովո-
րաբար լինում են 500 երկաթե ՄԱՀԱԿԱԼ-
ՆԵՐ 6 ր.—60 ր., երկաթե ԳՐԻՉՆԵՐ ամ-
բողջ Անգլիկական համար, շօղաղ ֆրայ,
Շեփիլդի ԳԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿ-
ՄԱՍՏԵՐ մազերի համար, հրացանների ԳԱՌԻ,
ԲԵՎՈԼՎԵՐՆԵՐ ՎԵՐԻԻ, ԹԱՄԵՐ Բարների,
ԿՅՈՒՄԱՆԻ Նըշըշայ, ԱԲՏՄՆԵՐ Շվարցի կէս
գնով: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ,
ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ
ԳԱԼԼԵՐԻՑՈՒՄ № 156, 157, 158,
159 և 100:
77—100

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ
ՄԷՋ. ԹԷՑԻ ԳՆԵՐԻ ՆՇԱ-
ՆԱՌՐ ՓՈԳՐԱՅՈՒՄՆ
(MAISON DE CONFIANCE) ԱՐԾՐՈՒ-
ՆՈՒ ԳԱԼԵՐԵԱ № № 156, 157, 158,
159 և 160.
Համեմատեցէք թէյ
1 ր. 10 կ. թէյի հետ ամեն տեղ 1 ր. 30 կ.
1 „ 20 „ „ „ „ „ 1 „ 60 „
1 „ 40 „ „ „ „ „ 1 „ 90 „
1 „ 60 „ „ „ „ „ 2 „ 20 „
1 „ 80 „ „ „ „ „ 2 „ 50 „
ամենալաւ 2 ր. „ „ 3 „ —
Մի և նոյն տեղը գործակալութիւն վա-
ճառման շօղաղի և Կախօ-ֆրայ էսսեն-
ցիայի, Պալմերի բիսկիտների, Բալլի կօն-
ֆեկաների, Շեփիլդի դանակների, Տուրնե-
րի գրիչների, Գաուրի հրացանների, Վեկի
լեզվովները, Բարների թամբերի, Մեկինի
ամսաներ, Կոյմանի կրախմալ և մանանեխ,
Շվարցի ալբոմներ և այլն և այլն:
27—100

Մի շի փողոց, Կաթօլիկ շէնկայա փողոցի անկիւն № 13.
Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԵՆԵՍԱՅԻ ՄԵՐԵԼ ամե-
նայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթե ԿՐԱՎԱՅՆԵՐ 8—30 ր., չա-
մադաներ 250—25 ր., սակիզածներ 1. 30—12 ր., սոուլ գոլէն եր ճա-
նապարհի 6—35 ր., մարաններ (погребы) 6—25 ր., սամովարներ 60
կ.—1.25 ֆունտը, կուխոնի պինձե ամաններ, Գերմանիայի երկաթե էմալով
ամաններ. ու մի վա լին կն եր մր սամօ րնի 38 ր.—75 ր., հրացաններ
երկու լույսնի 6—32 ր., աւելի վա լին կն եր ամենայն տեսակ 3. 50—30
ր., պատրոններ. (գուլաններ) լեզվովերի, սիգար Բէնգարդի ֆարրիկից, պապի-
րոս և թամբաբու Կուշնարովի զիլդի պապիլրօզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՑ (չայ) եղ.
ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկիտ. (սուխար չայու և կաֆէ) ԵՆԵՄԻ. Կօֆէ ԵՆԵՄԻ և
ՄԻՆԵՐՍԵՐԻ. Պետրբուրգում 40—1 ր. 25 կ. հայերենի ամենայն տեսակ
28 կ.—240 ր., պրորկայ զինկաճառներ, հանքային և գարեջրի (ДЛЯ
зельтерскихъ водъ и пива) զոյլթուկ (пучкъ), պարտաներ սամովարի և
չայու, դանակ չանգալ զանազան ֆարրիկաներ 1 ր. 20 կ.—25 ր. գոլմիւր.
գրախոյն 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիլի 1—60 կ.—12 ր., դա-
նակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբօր.
միս կտրելու մաշինայ. Անգլիական ութներ, Բրիտանիկ չայնիկներ, կաֆէ-
նիկներ ամենայն տեսակ, ջաղագներ կաֆէի համար, ֆիլաներ—Չուր մաքրելու,
կրախմալ կարօրէկն 18 կ., վաքս ֆրանսիայի ժակոյ, թուղթ փոշոյի, կանվիտո-
ներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթե, գրչակոթ, քարեախմակ, թանաք,
թանաքամաններ, պրեսպապիկներ, գզաներ սեղանի և չայու ֆրաժե, վարչալի
և բրիտանիկ գոլմիւր 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չու-
միլէք 45 կ.—5 ր., չամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխտ, պոլ-
սապոշկաններ վարչալու, Ռեզինի ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլաններ կա-
նանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուս-
տիկներ, գնախիկներ 35 կ.—4—50 կ., հատ, սնձրէի և շքի. սանդղի շի-
մայու ոսկորէ, գուլտապրչովի և փայտէ, շոտկաներ զիլի, շորի, սապիկի, պոլի և
կարտի համար. չուլի թէլ (бумага) մատոկի կօճի և շալէ (тарусъ) ֆէլ-
չատիէք մարդկերանց և կանանց, պորամաններ, քիսաներ, պապիլրոսի ամաններ
և մանր գոլանախիլի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.—30 կ.,
կտոր, հոտաւետ ջիլի, պուլրա, Գրիչերին ջիլի քաղախ, հոտաւետ պարաչոկներ
ԿԻԼԵՐԻ ԼԱՐՕՐԱՏՈՒՑ. և այլն և այլն:
Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերջիշեալ ապ-
րանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԵՐ ՆԻԿՈՂՈ-
ՍԵԱՆՑԻ պահեստում. (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի ան-
կիւնում № 13.
Օտարաբաղադրացիք կարող են զիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ Ми-
хаилу Н. Теръ-Никогосову.
172—180

Մի շի փողոց, Կաթօլիկ շէնկայա փողոցի անկիւն № 13.
ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԵԿԻՑ
ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎ ԵՆ ՎԵՆԵՆԱՅՈՒՄ
L'ORIENTAL
ՖԱՆԱՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ:
«Ժուրնալ դ'Օրիան» լրագրի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ
կուղարկիլի այդ նոր հրատարակութիւնը:
«L'Oriental» թերթի տարեկան գինը 8 րուբլ է, կէս տարվանը 4 րուբլ:
Գրիլ կարելի է «ՄՇԱԿԻ» խմբագրութեան մէջ, կամ ուղղակի ՎԵՆԵՆԱՅՈՒՄ զիմե-
լով հետեւալ հասարակ հասցեով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.